եւ կարտերի վերայից, կամ այլ ճանապարհորդների ուսումնասիրութիւններից: Տառերի ձայները Կովկասում գործածուած սովորականն է: Չեմ եղել նոյնպէս Թեւիս, Մաճիխել եւ Աջարա:

Ես չեմ կարող պնդել, որ մի սմփոփ գործ եմ տալիս պատմութեան եւ գրականութեան, քանի որ ես ինքս անձամբ նրա թերութիւնները նկատել եմ. բայց ես տալիս եմ ճանապարհորդական նկատողութիւններս, ժողովրդի կենդանի բարբառի արտասանութիւնը եւ նրանց տուած բացատրութիւններն ու աւանդութիւնները: Ես այդ բոլորը, համեմատելով մեր հին պատմագիրների թողած յիշատակարանների հետ, ենթադրութիւններս նոյնպէս տալիս եմ ծանօթութիւններով: Ես մի ճանապարհ, մի նեղ կածան եմ բաց անում, յուսալով՝ որ ինձնից յետոյ գալողները կ՝ընդարձակեն այդ անցքը, ուր երկաթուղի եւ ակրօպլան կը հաստատեն եւ խկութիւնը կը յանձնեն գիտական աշխարհին: Թող ներեն ինձ, որ ես չտապում եմ այդ կատարելու, քանի որ համոզուած եմ, որ բարբարոս ձեռքերը, նեղ մտածողները եւ չովէնները գործում, ոչնչացնում են այդ մնացորդները, այլանդակում են, եւ Լալա փաշայի կիսակործան թողածները իսպառ անհետացնում են:

Կան բազմաթիւ թրքականացած յատուկ անուններ, որ թուրքերէն քարտէզների